ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2010 թվականի _____ _____ N _____ -Ա

«ԱՐԱԲԿԻՐ» ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ-ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի 2-րդ մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի N 73-Ն որոշմանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

«Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (իրավաբանական անձի գտնվելու վայրը և գործունեության իրականացման վայրը (հասցե)՝ ք. Երևան, Մամիկոնյանց փող., թիվ 30) տալ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պահպանման լիցենզիա՝ երեք տարի գործողության ժամկետով:



ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հոգեմետ նյութերի պահպանում գործունեության իրականացման լիցենզիա տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը կառավարության քննարկմանն է ներկայացվում վերոհիշյալ կազմակերպության հայտի հիման վրա։
Կազմակերպությունը հայտին կից ներկայացրել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, 17-րդ հոդվածի 2-րդ և 43-րդ հոդվածի 2-րդ մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հունվարի 31-ի N 73-Ն «Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի պահպանում գործունեության իրականացման լիցենզայի ձևերը հաստատելու մասին» N 73- Ն որոշմամբ նախատեսված հետևյալ փաստաթղթերը՝
1. լիցենզիա ստանալու մասին հայտը
2. կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները
3. լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը /50000 հազ. դրամ/
4. ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից տրված անվտանգության պայմանների պահպանման մասին եզրակացությունը
5. անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճեն
6. բժշկական օգնության և սպասարկման գործունեության լիցենզիայի պատճենը
ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը և ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացրել են դրական կարծիքներ։
Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, 17-րդ հոդվածի 2-րդ և 43-րդ հոդվածի 2-րդ մասը, «Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պահպանում գործունեության իրականացման լիցենզիա ստանալու համար հայտը հնարավոր է բավարարել՝ երեք տարի ժամկետով։

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ